

№ 10

Առհասաստանի ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱ-  
ՑԻՎ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 10

Պրոլետարներ բոլոր երկրների, միացք!

## ԿԱՐԼ ՌԱԴԵԿ

I

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ  
ԳԵՐՄԱՆԻԱՑՈՒՄ

II

ԿԱՐԼ ԼԻԲԿՈՆԵԽԸ

(Լիբկոնեխի նկարով)

ԹԱՐԴԱ. Ա. Կ.

Գինն Է: 1 թ.



ՀՐԵՏԱՐԵՎ ՈՒՓԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐծԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ՄՈՍԿՎԱ—1918

№ 10 Ողիսասանի Սոթիկիստական Ֆեդոր-  
Տիկ Խորչորդացին Հանրապետութիւն № 10

Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք!

ԿԱՐԼ ՌԱԴԵԿ

1911 3. 40.



ԿՈՄԻՏԱՆԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ  
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

ԿԱՐԼ ԷԻԲԿՆԵԽԸ

ԹԱՐԳ. Ա. Կ.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐծԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ  
ՄՈՍԿՎԱ—1918

Մ Ա Ս Կ Ա  
Տագարան Եղբ. կ. և Ժ. Մ Ո Ւ Ա Դ Ե Ա Ն Ե Ր Ի  
1918



ԿԱՐԼ ԼԻԲԿՆԵԽՏ

## ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Օրերս տեղի ունեցաւ գերման «Սպարտակ» խմբակի և ձախ-արմատական խմբակների կոնֆերանսը, որ կոմմունիստական կուսակցութեան հիմքը դրեց Գերմանիայում: Կոմմունիստական կուսակցութիւնն այժմ քանակով թող է Գերմանիայում: Նրա զեկավար գործիչները նստած են պարոն Ֆլիխը Շայլեմանի բանտերում: Բայց՝ Գերմանիայի բանտորական շարժման մէջ խոր արմատներ ունի այդ կուսակցութիւնը, ունի երկար տարիների պատմութիւն, և ոչ մի կասկած, որ գերման լեզափոխութեան մէջ զեկավար գեր պիտի կատարի նա:

Գերման կոմմունիստական կուսակցութիւնը սկիզբն է առնում այն պայքարից, որ պառակառումն առաջ բերեց գերման մարքսիզմի մէջ և որի զրդապատճաններն էին հետևեալ երկու խնդիրները՝ վերաբերմունք դէպի իմպերիալիզմը և վերաբերմունք դէպի մասսալական գործադուլը:

Ութ տարի սրանից առաջ բանից երեաց, որ գերման մարքսիզմը լեզափոխական տարրերի միութիւնն է այնպիսի էլեմենտների հետ, որ մարքսիստական դրօշի տակ զուտ օպորտունիստական քաղաքականութիւնն էին վարում, որ խօսքով մար-

բոխտա էին, իսկ դործով՝ օպորտառնիտ։ Տեսակա-  
նապէս՝ գերման մարքսիստների մեծամասնութիւնը  
խոստովանում էր, որ իմպերիալիզմի շրջանում  
կապիտալն իր աճող կազմակերպութեամբ ձգտում  
է երկրի ներսն աւելի սաստիկ շահագործել բան-  
ւորներին, իսկ երկրից գուրս՝ իմպերիալիստական  
աւարտութիւն անել։ Բայց նրանք հրաժարում  
էին խոստովանել, որ միաժամանակ կապիտալիզմը  
հող է ստեղծում պրոլետարիատի մասապին լեզա-  
փոխական շարժումների համար, և որ մարքսիզմի,  
սոցիալ-գենոկրատիալի պարտին է՝ բանւորներին  
նախապատրաստել այլ կուր համար, կուռ կազ-  
մակերպութեամբ ու քաղաքանորէն սրելիմպերիա-  
լիստական պետականութիւնների բոլոր ներանակութիւն-  
ները։ Եւ այլ այն նպատակով՝ որ իմպերիալիզմի  
միջաւ աւելի ու աւելի հաստատուն գարձող ֆրոն-  
տի հանդէպ փողոցալին ցուցերի և զորմազուների  
միջոցով բանւոր դասակարգի ֆրոնտն սաեղծւի։

Գերման մարքսիստների մեծամասնութեան  
ուղարագրութիւն էր Կարլ Կառլց կիւն Երկրորդ հն-  
տերնացիոնալի հինուուրց թէորետիկո, որ մինչև  
վերջին ժամանակներս լեզափոխական սոցիալ-գենո-  
կրատ էր ճանաչւում: Կարլ Կառլցին լայտնում էր,  
որ իմպերիալիզմը սոսկ մի խուժք կատարայիստնե-  
րի քաղաքականութիւնն է, թէ բուրժուազիալի  
լայն շրջաններում կան ուժեղ տարրեր, որ խաղա-  
գութեան կողմնակից են, որովհետև իմպերիալիզմը  
նրանց ոչինչ չէ կարող տար: Մասսակարն զործո-

զութիւնների, և երբին պալքարը սաստկացնող լեզափոխական ազիտացիալի լոգունգներին՝ որ բան- ւոր դասակարգին ասում էին թէ՝ անհրաժեշտ է, կոխ մզել բուրժուազիալի դէմ, պալքարել և այն էլ ո՛չ միայն պարլամենտական միջոցներով, այլև օգտագործելով պրոլետարիատի նշանակութիւնն արտադրութեան գործում, զիմել մասսալական գոր- ծադրունների, — Կարլ Կառլցիին բուրժուական լիբե- րալ աարքերի հետ միասին պարլամենտական պալ- քարի լոգունգն էր հակագրում: Նա ասում էր, որ դեռ չի հասել մասսայական շարժումների ժա- մանակը, և որ այդ շարժումները կարող են վերջա- նալ լոկ բանւորական կազմակերպութիւնների չախ- չախումով:

Աւրեմն, Կոր Էպօխակի, իմակերիալիզմի էստուայի վերաբերմամբ ևս Կառուցին ուրիշ զէնը չէր հանաչում, բայց Երկրորդ հնատերնացիոնալի գէն-քերից՝ պրոֆեսիոնալ և պարլամենտական խողագ պայքար - բութուազիալի լիբերալ աարքերի հետ միասին՝ ուժքորմներ իրազործելու նպատակով։ Նո և իր համհարգները հանդէս էին զալիս իրեւ սո-ցիալ-գենոկրատիայի և բութուազիալի համաձայ-նութեան պաշտպաններ (1912 թ. բնարութիւն-ների ժամանակ), հանդէս էին զալիս բութուական պացիֆիզմի (խաղաղասիրութեան) բարոգներով, ո՛չ թէ իմակերիալիզմը յազմեահարելու, այլ ուզգելու և այնպիսի ձեւ տալու նպատակով, որ իմակերիալիզմն ընդունելի լինի բանառը գաստկարդի համար։ Թէ և

Կառւցին փորձեր էր անում իր բռնած այդ գիրը՝ պաշտպանել մարքսիստական հիմնաւորութերով, բայց՝ իրապէս նա գերման ու վիդիոնիզմի քաղաքականութիւն էր փարում:

Նրան ամենան եռանդով հակամառում էր Բրեմենի և Լազարիդի բանւորական թերթերի շուրջ համախմբւած խմբակը, որ յալտարարում էր մասսային յեղափոխական գործողութիւնների լոգունդը, համարելով այդ գործողութիւնները սոցիալական յեղափոխութեան փոխանցիկ աստիճան։ Այդ խմբակի կարծիքով՝ պատմութեան հերթական էջը սոցիալական յեղափոխութիւնն է։ Այդ խմբակի ներկայինների տեսական պալքարը խմբակի շուրջը հաւաքեց բանւորների յարահուն մի բաղմութիւն, մասնաւանդ գաւառներում։

Դեռ պատերազմից առաջ գերման մարքսիզմը երկու հաւաքածի բաժանւեց՝ ալապէս կոչւած կենտրոնի—Կառւցիու, Հիլֆերդինգի, Էկշտայնի, Հաուզէի և Լեզերուրի դլխաւորութեամբ և ալսակս կոչւած ձախ-արձատականների—Կուֆի, Ռոզա Լիւկսնբուրգի, Պաննեկուկի, Դալշհայմերի, Վեստմայերի և Կլարա Ցետելինի յեկավարութեամբ։

Ինտերնացիոնալի միւս մասերի համար պարզ էր այս երկու հոսանքների պայքարի նշանակութիւնը։ Ինտերնացիոնալի մէջ ձախակողմեան շատ ընկերներ տրամադրիր էին կարծելու, որ ալսակս ինչէրը լէ՞ և նույն դական մարքսիստներին է վերաբերում, որոնց նոպատոկն է խորթ մեթոդներ

սրսկել գերման բանւորական շարժման մէջ։ Եւ երբ մենք բնովթագրում էինք «կենտրոնը», որպէս մի նեխած հոսանք, որ բնդարմայնում է բանւորական զանգւածները, հանգստացնում նրանց և զապում պայքարից—շատերն այդ չափազանցութիւն էին համարում։ Նոյնիսկ չափազանցութիւն էր թւում, երբ մենք պնդում էինք, որ գերման սոցիալ-գեմոկրատիան բանւորական արիստօկրատիան կուսակցութիւնն է՝ մերւած օպորտունիզմով։

Եկատ 1914 թ. օգոստոսի 4-ը։ Գերման սոցիալ-գեմոկրատիայի մեծ մասն ակնյայտօրէն անցաւ գերման իմպերիալիզմի կողմք, բօղարկելով գերման իմպերիալիզմի արշաւանքը հայրենիքի պաշտպանութեան լոգունգով։ Ալսպէս կոչւած «կենտրոնի» պարլամենտական ներկայինների  $\frac{9}{10}$  մասն երեաց դաւաճանների բանակում։ Եւ վաղեմի գրօշին ձեապէս հաւատարիմ մնաց լոկ փոքրաթիւ մի խմբակ։ Բայց, իրօք, սա էլ չէր կարողանում իմպերիալիզմի գէմ ելնել՝ քօղարկելով կուսակցութեան միաբանութեան անհրաժեշտութեամք, թէև գաւաճանութիւնը սոցիալիզմի դաւաճանների հետ միաբաննեն է միան։ Գերման սոցիալ-գեմոկրատիան կրախ կրեց և նրա հետ միասին այդ վիճակին արժանացաւ «կենտրոնը», որի քաղաքական պարագութիւն չուզո Հաուզէն պարլամենտում օգոստոսի 4-ին հոչակաւոր յախտարարութիւն կարգաց հայրենիքի պաշտպանութեան մասին։ Իսկ «կենտրոնի» գաղափարական-գլուխ Կառւցին դերման սոցիա-

լիզմի այդ կատասարովից յետով բանւորներին արած իր պիմումով խօսք դառաւ արդարացնելու եղածն և միաբանութեան կոչ անելու:

Յատկապէս այդ ձոժենախն երեաց, որ իզուր չէր ձախ-արձատականների աշխատանքը, նրանց պայքարը նեխած կառւցկիանութեան դէմ, թէ պատերազմից առաջ նրանք չկարողացան բանոր գասակարգին հասկացնել իմալերխալիզմի վտանգներն և յեզափոխական կուի անհրաժեշտութիւնը: Բայց նրանք ստեղծեցին բանւորների մի փաշտ, որ կուսակցութեան կործանման պահուն, ամենագառն հիանթափութեան պահուն, իր առաջ պարզապէս պայքարի ուղին էր տեսնում, հասկանում կործանման պատճառները և դիտէր այդ գրութիւնից ելնելու ճանապարհները: Արդէն օգոստոսի վերջերին մօտ՝ միաժամանակ սկսում են գործել թերթինի ձախ-արձատականներն և թրեմենի ու Համբուրգի խմբակները: Նրանք ձեռք-ձեռքի տւած բուրդի խմբակները: Նրանք ձեռք-ձեռքի տւած չեն դնում, նրանք բաժնուած են իրարից զանազան մտանաւոր և անձնական խնդիրներով, բայց նրանք միևնույն ուղղութեամբ են դնում: Դեռ ժամանակը չէ թւելու ան անունները, որոնք այդ տմիսներին աշխատում էին ամբողջ Գերմանիայում պայքարող բնիծներ ստեղծել, մարդիկ, որ նախ կուսակքարող բնիծներ ստեղծել, մարդիկ, որ նախ կուսակքարող բնիծներին ներսն էին կամենում ցտկան կազմակերպութիւնների ներսն էին կամենում կազմակերպւած սոցիալ-գենոկրատիացին հասկացներ, ինչ ի՞նչ մեծ զաւաճանութիւն է աեղի ունեղել

օդոսուսի 4-ի օրը, բայց և որոնք շուտով ակնկալա կոխւ են սկսում կուսակցութեան դէմ:

1914 թ. սովետների 21-ին Կարլ Լիբկնեխոր ձայն տւեց մարտական բիւշէի դէմ և այդ տատչին բացարձակ կոչն էր մասսաներին: Բանւորները հազիւ-հոգ շարժւեցին, իսկ կուսակցական «կենարոնը» կամեցաւ խեղել ամեն շարժում, աղմուկաղագակ անելով, թէ վաղաժամ է այդ և անշատման վասնդ է սպանում: Լիբկնեխորի այդ բայց «կենարոնը» համարեց ստորացուցիչ մի ապահի: «Կենարոնը» փորձեց մասսաների աչքում անւտնարկել Լիբկնեխորին, համարելով նրան ինքն իրեն սիրահարւած, անձնապատան մի մարդ, որ կամենում է միայն փայլել մասսաների առջև: Բայց բանւոր մասսաներն ըմբռնեցին նոյեմբերի 21-ի ակտի իմաստն և սկսեցին համախմբւել Լիբկնեխորի շուրջը, խոտցնել իրենց շարքերը: Լիբկնեխորն սկսում է թերթիկներ հրատարակել, լուսարանել անցըքերը, ստորագրելով Սպարտակին՝ չոռմի սպասամբ բանւորների առաջնորդի անունով: Միաժամանակ Համբուրգումն էլ ձախ-արձատականների խումբը գոկտոր Լաուֆեմբերգի և Վոլֆհարմի առաջնորդութեամբ սկսում է հրատարակել մի շարք բրոշիւրներ, որոնք թէ են հետառողական չեն մինչև վերջը, բայց և այնպէս պրոպագանզի հոկայական նիւթ են տալիս: Բրեմենցիների խումբը (Բրեմենի Սմենօրենու Լրագրում), չնայած «Կենարոնի» հոկայակութեանն ու յենդուրայի խսութեանը, ո՞չ միայն ամենօրեաց մարտական

աշխատանք է կատարում, այլեւ լուսաբանում ինտեր-  
նացիոնալի կրած տեսական մնանկութիւնն ու բոլոր  
իրազարձութիւնները։ Փոքրաժաւալ «Լոյսի Շո-  
ղեր»-ի էջերին խական կոխւ է մղւում յանուն լեզա-  
փոխական մարքսիզմի, որ, չնայած հրատարակչի քա-  
զաքական ապաշնորհութեան, շատ օդտակար գործ  
տեսաւ ծաղող երրորդ ինտերնացիոնալի գաղա-  
փարները տարածելու գործում։

Արտասահմանում գերման ցանուցրիւ կոմմու-  
նիստական խմբակները «Բերներ Թագեվախու»  
թերթի շուրջն են կենտրոնանում։ Այդ թերթի մէջ  
հաւաքւում են գերմանական կոմմունիստական շար-  
ժման մասին բոլոր աեզեկութիւնները։ Այդ թերթը  
ձգտում է ի մի ձուլել գերման կոմմունիստական  
շարժման մեկուսի խմբակները։ 1915 թ. մայիսին  
Լիբինեխտի խմբակը յաջողում է լոյս ընծալել «Ին-  
տերնացիոնալ» հանդեսը։ Այդ հանդիսի երեսն  
դալը նիշում է Գերմանիայում կոմմունիստական  
կուսակցութեան առաջ դարու անդրանիկ շրջանը։  
Այդ հանդէսն անշեղ կերպով աեստական սահման է  
գծում ո՛չ միայն բանուոր դաստիարգի ուխտեալ  
դաւաճանների, այլ և «կենտրոնականների» վերա-  
բերմամբ։

Սակայն՝ Ցիմմերվալդի կոնֆերանսում երեսում  
է, որ դիւրին է աեստական ճշմարիտ ուղի գծեր  
քան այն իրազործել։ Մասսաները շարժւում են,  
քայլ առ այժմ գործի չեն անցնում, ուստի և նրանց  
մէջ գերակշռութիւնը կենտրոնականներին է։ Զախ-

արմատականների մէջ զործնապէս աւելի զգուշա-  
ւոր տարրերը, ինչպէս օրինակ՝ ընկ. Կլարա Ցետկի-  
նը՝ գերման բանւորուհիների առաջնորդը՝ գերման  
բանւորական շարժման այդ երախտաւոր գէմքը,  
կոմմունիստական կուսակցութեան շերմտղին սիրար,  
այնուամենացնիւ չի վստահանում կարւել կենարո-  
նականներից, երկիւղ կրելով, որ այդ դէպքում առ  
այժմ ամայութեան մէջ կընկնեն կոմմունիստները, կըր-  
կւեն զարթնացող մաստանների օժանդակութիւնից։  
«Ինտերնացիոնալ» խմբից Ցիմմերվալդի կոնֆերան-  
սուն ուղարկւած պատիբակութիւնը, չնայած որ գա-  
տափետում է կենտրոնականներին, այնուամենացնիւ  
վերջնական բւէրկութեան ժամանակ նրանց հետ  
է գնում։

Կարլ Լիբինեխտի ձերբակալութիւնը՝ որ հա-  
կառակ էր այդ թերատ տակտիվային, որ պահան-  
ջում էր բոլոր կապերը վերջնապէս կարել կենտրո-  
նականների հետ—զօրացնում է գերման կոմմու-  
նիստների աջ մասը, որ, հակառակ լիներով կենտրո-  
նականներից անջատւելուն, չէ կարողանում բա-  
ցարձակ կերպով սոց.-գեմ. կուսակցութեան պա-  
ռակաման խնդիրը խթաններ։ Այս հիմունքներով էլ  
խորթանում են նրանք և Բրեմենի Ճախ-արժատա-  
կաններին, որոնք այդ ժամանակ «Արբայտեր Պո-  
լիտիկ» շաբաթաթերթի մէջ հետեւղական կոխւ են  
մղում թէ սոցիալ-պատրիոտների դաւաճանութեան  
գէմ, որոնց նկատմամբ բացարձակօրէն ու պարզ  
շեշտում են կուսակցութեան անջատաման լոգունդը,

և թէ պացիֆիստական լրգունդներ հոչակող կենարոնականների անզործութեան գէծ:

Բայց՝ չնայած իր տակարկական սխալներին՝ անտերնացիոնալ» խումբը հրապարակալին բոլոր ցոլցերի ժամանակ աւելի վճռական գործօնի գերէ կատարում: Նու է առաջնորդում բանւոր մասսաներին, հէնց որ սկիզբն են առնում պարէնացին անկարգութիւնները, գործադույներն ու քաղաքական ցոլցերը: Եւ յատկապէս այդ պալքարի պրոցեսում, հէնց այս խմբակի մէջ է մուտք գործում Բրեմենի «Արքայտեր Պոլիտիկի» հետեւզական պրոպագանզը:

«Ի՞նտերնացիոնալ» խմբակի մէջ առ այժմ գերազանցում է «անկախների» հետ միասին ֆինանժառումը, թէև իր կազմակերութիւններին ուղղած գոլզանի հրահանդներում խմբակն անցողիկ անհրաժեշտութիւն է համարում պացիֆիստական կենարոնականների հետ միասին լինելը, ի նկատի ունենալով, որ ինքն անելեզակ խումբ է, մինչ կենարոնականներն ինչ-ինչ լեզակ հնարաւութիւններ ունին: Երբ «սպարտակեանները» միանում են «անկախների» խմբին՝ «սպարտակեաններից» անշատում են ձախ-արմատական առարերն և խմբում «Արքայտեր Պոլիտիկ»-ի շուրջը:

Ֆրանց Մեհրինգը՝ գերման սոցիալ-գենկրատիկի պատմաբանն ու «սպարտակեանների» սուսչնորդներից մէկը, «Պրավда»-ի էջերին իր բաց նամակով մէծ սխալ համարեց «սպարտակեանների» միանալն

(անկախներէն): Սպարտակեանների արդի համագումարն ևս խոսափանեց, որ այդ միութիւնից ձախերը ոչինչ չառացան, բայց վնասից: Այս զիտակցութիւնը, ինչպէս և վերահաս անցրերը, որ սպարտակեաններին այնուամենանիւ հնարաւորութիւն էն ապիս յուս աշխարհ գուրս զարու՝ այլ ևս վերացնում են զերծան կոմմունիստական առարերի անշատման զրգապատճառները: Աւստի և մենք չերձագինս ողջունում ենք սպարտակեանների միութիւնը Բրեմենի, չամքուրզի և ձախ-արմատականների միւս խմբակների հետ: Այդ միութիւնից գուրս է մնում միան ընկեր իւլիան Բորխտակի զորքին ներկւած, բայց ինքնահան մի մարզու, որ չէ կորենում իր գործողութիւնները ներգաշնակել ուրիշների գործողութիւնների հետ,—խմբակը:

Այդ միացումը հաստատուն պատաւնդան ունի: Այդ պատաւնդանն է ներկազիս իննդիրների որոշ րմբոնողութիւնը, սոցիոլիստական յեղափոխութեան ակտակետից, մխատական վերաբերում զէսի պացիֆիզմը, որպէս բանւորութիւնը խարելու մի մեթոդի, առանձնապէս սոցիալիստական յեղափոխութեան շրջանում, և մասսակին յեղափոխական գործողութիւնների ձգտութիւն, որպէս ծաւալող յեղափոխութեան ելակետի:

Գերման կոմմունիստները սկսում են զոյտութիւն ունենալ որպէս զաղափարական կուռ կուսակցութիւն: Նրանք ունին բաւականաչափ սուսչնորդներ՝ ակտականօրէն համաշխարհային դր-

բութեանը գիտակ, և բաւականաչափ սքանչելի առաջնակարդ բանւորներ, որ եփւել են 4-ամեայ անլեզալ պայքարի մէջ: Նրանցից շատերը տակաւին բանտերումն են նստած, բայց մօտ ապագայում կամ գերման կառտվարութիւնը ստիպւած կլինի ազատել նրանց, կամ ժողովրդական զանգւածները կազատեն նրանց: Այդ առաջնակարդ բանւորները սպայական կազմն են՝ հարազատ ու մտերիմ ո՛չ միայն Բերլինի, այլ և ամբողջ Գերմանիայի բանւորութեան: Մենք ատրակոյս չունինք, որ պ. Շալլեմանը չի չափազանցնում վտանգը, եթի ամեն օր կոկորդ է պատում գերման բոլշևիների մասին: Գերման բոլշևիզմը զոյտութիւն ունի, նա ոչ է, որ գաղափարապէս գերազանցում է ամեն ինչ որ սպասնալի է իր թշնամիներին, շուտով նա բաղաքական անուելի զօրութիւն կդառնալ, որովհետեւ, ով փոթորկի պահուն գիտի ընդօվեալ խութերի տեղը և հզօր բազուկներ ունի՝ նա՛ կարող է վարել նաւք: Յանձինս գերման կոմմունիստական կուսակցութեան մենք ողջունում ենք այն կազմակերպութիւնը, որի նետ ուռւ կոմմունիստները շաղկապւած են նպատակի միութեամբ, զաղափարակցութեամբ և միմեանց օղնելու վճռականութեամբ: Ապագայում այդ կոմմունիստական կուսակցութեան շարքերից զուրս կզան գերման բանւորական պետութեան առաջնորդները: Որուս պըռլետարիատը կարող է համոզւած լինել, որ Գերմանիայում ունի ախաղիսի բարեկամներ, որոնք ո՛չ

միայն մտքով են համերաշխ իր հետ, այլ և զործով պիտի լինին համերաշխ: Գերմանիայի կոմմունիստները — մի բանակ են, որ զօրացներու է ուռւ յեղափոխութեան ազգեցութիւնը նաև աւստրիական յեղափոխութեան վրայ, որովհետեւ այդ բանակը շատ թելերով կապւած է աւստրիական բանւորական շարժման հետ: Միջազգային յեղափոխութեան զարդացման ընթացքում գերման կոմմունիստների հոկտեմբերի 7-ին տեղի ունեցած կոնֆերանսը կարեոր մի փաստ է: Կոնֆերանսը տեղի է ունեցել ատկաւին անլեզալ կերպով: Բացակայում էին առաջնորդները, որ նստած են բանակերում, և նու մասանների հետ զեռ անլեզալ թուուցիկներով է խօսում: Նաև հուանական է, որ պ. Շալլեմանը մինչև վերջին բուգէն բոլոր ուժերով պիտի զիմագրի մեր եղբարրակից կուսակցութեան յեղալիզացիալին: Բայց մենք չենք կասկածում, որ նա չպիտի կարողանալ կտրել այդ կուսակցութիւնը ժողովրդական մասսաններից: Որովհետեւ Գերմանիայում չկայ բանւորական մի ուրիշ կուսակցութիւն, որ կարող լիներ բանւորների դլուխն անցնել յեղափոխական ժամանակներում, բացի կոմմունիստական կուսակցութիւնից, որ այսօր կազմւում է «Խնտերնացիոնալ» խրժակից և Ճախ-արմատականներից:



## ԿԱՐԼ ԼԻԲԿՆԵԽԵԽԸ

II.

Կարլ Լիբկնեխտին գերման կառավարութիւնն արձակեց տաժանակիր բանահից, ուր նա տառապում էր 1916 թ. սեպտեմբերից ի վեր: Մասսաների ուշըն այս մարդու վրայ է բեեռւում, և ուս բանւորների աչքում միջազդացին համերաշխութեան ու Գերմանիայի նոր կեանքի ծարաւով ծառացած բանւոր դասակարգի սիմվոլն է նա: Այս պահուն, երբ Ռուսիայի բոլոր բանւորները խանգաղատանքով են ողջագուրում Կարլ Լիբկնեխտին, որպէսզի սոսկ սիրելի սիմվոլ չլինէր նրանց համար նա, որ նրան սիրելին իրեւ այնպիսի մի դէմքի, ինչպիսին որ է նա իսկապէս, իր բոլոր թերութիւններով ու առարինութիւններով, որ նանաշելով հանգերձ սիրելին նրան—ես կփորձեմ բնոյթագրել նրան, առանց որևէ երանգաւորման, ինչպէս որ նա կայ և, յամենայն դէպս, ինչպէս նրան նանաշել եմ երկար առարիների բնմացքում:

Զի կարելի հասկանող Կարլ Լիբկնեխտին, առանց հանաչելու նրա հօրը՝ Վիլհելմ Լիբկնեխտին, գերման սոցիալ-գեմոկրատիայի պատմութեան մէջ եզակի այդ մարդուն, որի հօգում 48 թիւր յեղափոխական բոյցը վառեց, որ և անմար մնաց մինչև իր կեանքի վերջին շունչը:

17

Վիլհելմ Լիբկնեխտը կարողացաւ յեղափոխական, մասսայական շարժման զգայնութիւնը պահպանել խաղաղութեան շրջանում, որ սկսւեց 71 թւից յեաոյ, մի շրջան, երբ բուրժուազիան հզօրանալ սկսեց, երբ յեղափոխութեան վերաբերեալ ամեն յոյս բացարձակապէս ընդունայն էր թւառմ: Նա պահպանեց իր մէջ յեղափոխական այդ ողին նոյնիսկ այն ժամանակ, երբ XIX դարի վերջին տասնամեակում բուրժուազիան սոցիալիստներին հալածելուց հրայարեց, երբ գերման կուսակցութեան առաջնորդների մեծ մասն սկսեց յոյս ասածել, թէ հնարաւոր է բանւորական շարժման խաղաղ զարգացումը, մի բան, որ ինքնին յեղափոխութեան բացասումն է: Կարլ Լիբկնեխտը ծնւեց այն ժամանակ, երբ նրա հայր Վիլհելմը նստած էր բանտում: Նրան ենթարկել էին մի բանի տարւայ բերդարգելութեան այն պատճառով, որ 71-ի Փրանս-գերմանական պատերազմով արիաբար պարզեց Փրանս-գերման բանւորութեան համերաշխութեան զրօշը:

Կարլ Լիբկնեխտը դաստիարակւել է մի միջավայրում, որ լի էր բանւոր դասակարգի հանդէպխորին սիրով, մի միջավայրում, որ լի էր անսամբլն նուրիածութեամբ ննտերնայինալի գաղտփարներին: Նա դաստիարակւել է մի միջավայրում, որ խորունկ հաւատքով ներշնչւած սպասում էր, թէ կայ օրը միջազդացին յեղափոխութեան, երբ յեղափոխական հակատամարտի մէջ բանւոր դաստիարգը կմօթափի կապիտալիզմի լուծը: Կարլ Լիբկ-



նեխափ առաջին աշխատութիւններից մէկը, որ լոյս  
տեսաւ 18 տարի սրանից առաջ, ժոռեսի գրքի  
խիստ քննադատականն է:

Նա քննադատում է խստօրէն ժոռեսի բարե-  
նորոգչական պատրանքներն ու հաւատքը, թէ բան-  
որ գասակարգը կարող է «զանդազ քազով», վեհեր  
զիզգագով մտնել ազատութեան, եզրայրութեան և  
հաւասարութեան թագաւորութիւնը: Վիճելմ Լիբ-  
կնեխափ յեղափոխական ոգին, որ կենդանի է և  
Կարլ Լիբկնեխափ մէջ, արտայալուած է ոչ թէ ազա-  
տութեան մասին ունեցած պղատօնական երազանք-  
ների մէջ, ոչ թէ սոցիալական յեղափոխութեան  
կրաւորական սպասումի մէջ, այլ անքնդհատ զոր-  
ծելու անհրաժեշտութեան դիտակյութեան մէջ,—  
մի բան, որ գարթեցնում է մտսանները, սաստակաց-  
նում դասակարգացն ներհակութիւնները: Կարե-  
լի է ասել որ ակտիվ կուտի հենց այդ ձգտումն է  
Լիբկնեխափ բնաւորութեան ամենայատկանշական  
գիծը,—մի դիմ, որով նա տարբերում է զերման  
բանոր դասակարգի միւս առաջնորդներից: Լիբ-  
կնեխափն յաճախ կշտամբել են այն բանի համար,  
որ նա սենսացիանների, հրաբորքոք ապրումների,  
յուցական քաղերի սիրահար է, սակայն բոլոր այդ  
յանդիմանութիւններն եղել են անհիմն: Այս, ինչ  
որ գիւր չի եկել ուրիշներին՝ Լիբկնեխափ յեղափո-  
խական բնազդն է, որ թերագրել է նրան այն հա-  
մոզումը, թէ մտսանները չի կարելի շարժել զիտա-  
կան գլութիւններով այլ միայն դիմելով փաստերի

օդնութեան, որ աղջում են նրանց զգացումները՝  
վրայ դիմելով նրանց երեսկազութեան օդնութեան,  
որ աղջում է նրանց սատարքսի վրայ: Մասսա-  
ները կարելի է շարժել ոչ թէ բանաձեր հանե-  
լով ոչ թէ վիճարանութիւններով, աղազակներով  
ողբ դղրգեցնելով, այլ կոչ անելով, որ նրանք փո-  
խեն վեանքի դոյլութիւն ունեցող պայմանները:  
Հնամոլութեան ցեխի մէջ խրւծ դերման սցիստ-  
դկամոլիրանիան, որ հանացում է միայն մի ձեռած  
հանապարհ, պարբռմենական պալքարի հանապարհ,  
երկիւզավ եր նայում երթառարդ Լիբկնեխափն, որ  
համարաբանն աւարակով և փաստարանական  
քննութիւնները տալով, (մինչ այդ նա հարկադրւած  
էր խուսափել հրապարակացն յեղափոխական գոր-  
ծունեկութիւնից) սկսեց նոր ուղիներ, աշխա-  
տոնքի նոր շրջաններ և մասսաների շարժ-  
ման նոր մեթոդներ որոններ Կարլ Լիբկնեխ-  
ափ յեղափոխական հոտառութիւնը թերազրում է  
նրան առանձին ուշաղրութիւն զարձնել երիտա-  
սարգութեան շարժման վրայ: Նա վորձում է կու-  
սակցութեան պատւատել այն հայեացքը, թէ պայ-  
քարն անող իմպերիալիզմի դէմ պահանջում է, որ  
կուսակցութիւնն իր յուրա չգնի միայն բանւորա-  
կան շրջաններում, սոցիալիստական միջավայրում  
ունեցած իր աղղեցութեան վրայ, այլ որ կուսակ-  
ցութիւնը ձեռնամուխ լինի նաև երիտասարգու-  
թիւնը սոցիալիստօրէն կրթելու գործին, նախ քան  
նա կը սկսի գորանոց:

Կարլ Լիբկնեխտը ստեղծեց բանւորական երիտասարդութեան կազմակերպութիւնները, որոնց նպատակն էր ո՛չ միայն սոցիալիզմի գոտափարների պրոպագանդը երիտասարդութեան մէջ, այլև և երիտասարդութեան ինքնագործունէութեան զարգացումը: Այդ կազմակերպութիւնների մէջ, երիտասարդութիւնը, աշխատելով իր ինքնակրթութեան համար, մասնակցելով կապիտալիստների դէմ մղւած պալքարին և ներգործոն կերպով միջամտելով քաղաքական կեանքին, առաջ էր բերում սոցիալիզմի մարտիկների նոր խմբեր:

Երբ Լիբկնեխտը պահանջում էր, որ կուսակցութիւնը ձեռնարկի կազմակերպչական և բարողչական այդ աշխատանքին երիտասարդութեան շրջանում, գարձնելով այդ միլիտարիզմի դէմ մղւած պալքարի լուսադոյն դէնքը, որքան որ, այդ կոիրք պէտք է մղել յատուկ միջոցներով, չբաւականանալով կապիտալիզմի դէմ մղւող ընդհանուր կուսով կուսակցութիւնն երկիւղ էր կրում երիտասարդութիւնը կազմակերպելուց, երկիւղ էր կրում հակամիլիտարիստական ազիտացիալից, երկիւղ էր կրում թարժ հոսանքից, որ Լիբկնեխտը մտցնում էր շարժման մէջ, կամ բացասական դիրք էր բռնում, տեղով, որ մեր ամբողջ աշխատանքն ինքնին հակամիլիտարիստական է, և կոմ բացարձակօրէն յախարարում էր, թէ պէտք է խուսափել պետական իշխանութեան հետ բնդիկութիւնի սոցիալիստական միլիտարիստին: Կարլ Լիբկնեխտը հրաշալի կերպով հասկանում է, որ բաւական չէ վերացական ազիտացիա մղել գասակարգալին պալքարի եղանակները սաստիացներու համար, այլ պէտք է պալքարը սաստիացնել գործնական միջոցներով: Նրան թւում է, որ պրուսական յանդագիրը ընտրական իրաւունքների ռածկավացումն արդիկի միջոցներից մէկն է, և նա յարում է այն ընկերներին, որոնք 1910 թ.

Նույն նու ձեռք էր բերել մի ձորցու համարաւ, որ կամենում է լեզափոխականութեամբ գերազանցել իր հօրք: Նա անդադար անզրագանում է հակամիլիտարիստական ազիտացիալի ինքրին, հրաշարկում է մի գիրք միլիտարիզմի գէմ, որի պատճառով մի տարի բերգ է նստում: Միաժամանակ, Խուսական լեզափոխութեան ազգեցութեամբ, որ նրա վրայ աւելի է ազգում քան միւս սոցիալ-գենուկրատների վրայ Կարլ Լիբկնեխտն իր միւս ընկերների՝ Խոզա Լիւկսեմբուրգի, Անտոն Պանեկուի, Կարլ Ցետինի հետ միասին մտանեցում է մասսական զործագույթի համար մղւող ազիտացիալին: Մասսական զործագույթը նա համարում է ոչ միայն իրքեւ պարլամենտական պալքարը լրացնող միջոց և ոչ իրքեւ միջոց, որ կարող է մի հարւածով ազատել բանւոր դասակարգը, այլ իրքեւ միջոցներից մէկը գալիք շրջանի մասսական կռւի, մասսական ընդհարութեան հասունացող սոցիալիստական լեզափոխութեան, որի ժամանակ հարկադրւած պիտի լինի դիմելու դասակարգալին կռւի բոլոր միջոցներին: Կարլ Լիբկնեխտը հրաշալի կերպով հասկանում է, որ բաւական չէ վերացական ազիտացիա մղել գասակարգալին պալքարի եղանակները սաստիացներու համար, այլ պէտք է պալքարը սաստիացնել գործնական միջոցներով: Նրան թւում է, որ պրուսական յանդագիրը ընտրական իրաւունքների ռածկավացումն արդիկի միջոցներից մէկն է, և նա յարում է այն ընկերներին, որոնք 1910 թ.

պահանջում են սաստիացնել կրիւն իւնկերաւ կանութեան դէմ, կանգ չառնելով, անզամ քնունաւուր զօրծաղուլ յալուրարելու առջև։ Ալլ հարցում նա միանում է ձմիւ արմատականերին՝ ընդդէմ Արք Կառուցիուն, թե ուրիշ շատ հարցերում նրանց համամետ չէ։

Սխալով ևս մենք պէտք է շեշավենք Լիբէնելատի մի բատկութիւնը, որի շնորհիւ, ի միջի ալլոյ, նա Երկար ժամանակ համակրում էր ուռու մենշեւ իւներին, նրբուն որ զորքը միքարերում։ Էր ուստի բարուրութիւններին Մասսաները յառաջ ալերու զբաղումը, յսուոչ շարժւելու համար դետեի անեն մի անհարթութեանու կառչելու ուժիրամեշտութիւնը զրիւմ էր Լիբէնեխուն փորձելու օլապործել այս բոլոր ուժերը, որ նրա կարծիքով կարող էին պէտքահան լինել։ Դործելու նրա բուռն մուռնի սախումը էր նրան տեսնել զործերու բայցանակ առրեր այնալով, ուր երէք նրանք չկաշեն։ Յու հումանկրում էր մենշենեխուն այս պատճեանի, որ մասմում էր, թէ Առուսիայում զեռ ևս դոյլութիւն ունեն բուրժուական զեմուկրատական ուժեր, որոնց կարելի է օգտագործել յեղափոխութեան դասին համար, և բան թւում էր, որ բոլշեվիսերն անուռ են առնուա այդ ուժերն և որ իրենց զուհարիւութեամբ (առանձութեամբ) վահում են նրանց։ Նա կարծում էր, որ կարելի է զեռ օգտագործել բուրժուական խաղաղատէր ուժերը, յանուն խաղաղութեան համար միւելիք պայ-

քարի մէջ, ուսափ և պատերազմից առաջ հակակրամեամբ էր վերաբերում ձախ-արձատականների պալքարին ընդգէմ այն խաղաղաբար նշանաբանների, որ առաջազրում էր գերման սոցիալ-դեմոկրատիայի կենտրոնը։ Եւ եթէ պատերազմից առաջ Կարլ Լիբէնեխուր կշամբում էր ձախ-արձատականներին, գոկրինեռութեան համար, ապա օրանք էլ իրենց հերթին հատուցանում էին նրան, մեզագելով (այն սոցիալիզմի), բաղաքական հաստատուն օրիենտացիայի պակասութեան մէջ։

Ալլագէս էր Լիբէնեխուր պատերազմից առաջ կրակոա քարոզիչ, ներգործոն քաղաքագէտ, որ ձգառում է շարժել մասսաները, որ ձգառում է միշտ զարնել նրանց զգերին, լարել նրանց ուշալըրութիւնը, մի մարդ, որ զործելու իր մոլեզին մղումով քանիցո վերցնում է հրացանը, որ չէ կրակում։ Յանդուդն, լաւ մարդ, — ինչպէս ասում են լեները, — թէ քէֆի և թէ կուի մէջ, եռանդով լի, գւարթ, բանւորների սիրելին, կանանց սիրելին, միշտ ոտքի վրայ, միշտ առողջ, ժրաղըներով լղի։ Երբէք չեմ մոռանայ, թէ ինչպէս զերման սոցիալ-դեմոկրատիայի Լալացիզի համագումարի ժամանակ, համագումարի աշխատանքներն աւարտելուց յետոյ, և օր շարունակ, իրիկւայ մասսալական միտինզներից յետոյ ամեն զիշեր մինչև լոյս քէֆ էր անում մեզ երիտասարդներիս հետ, նստում էր սրնարաններում գինու բաժակն առջեր, փրիւգիական կարմիր թղթէ լիմարկը զլխին (այն ժամանակ Լալացիզում Լալա-

շիզի հոչակաւոր տօնագաճառն էր), և ինչպիսի  
երջիւղով, ձեռքերը յետեր դրած, դիտում էր նրան  
իր լրջախոհ եղբայր թէոդորը: Իր ամեն մի շար-  
ժումով կարլ Լիբկնեխտը կարծես ասում էր, որ  
հարազատ զաւակն է իր հօր, մեծ պայքարողի, կեն-  
դանի մեծ մարդու, որ զիտեր զւարճանալ երեխտ-  
մի պէտ:

Բոնկեց պատերազմը, և նրա կրակի մէջ Լիբ-  
կնեխտի խառնւածքի, մտքի և բնաւորութեան  
այդ ըուրը տարերից դարբնւեց գերման բանւոր  
շասակարգի առաջնորդը:

## II

Երբ գերման սոցիալ - գեմոկրատիալի առջե  
ժառացաւ պատերազմի հարցը, պարզեց, որ վերջին  
տարիների պատեհապաշտ քաղաքականութիւնը  
մեռցրել է բանւոր զասակարդի մէջ յեղափոխական  
ողին, որ հնարաւորութիւն չկալ պատերազմին ակ-  
տիվ կերպով ընդդիմանալու: Ոչ ոք չէր կասկա-  
ծում, թէ կուսակցութիւնը կհրաժարւի այս պա-  
տերազմի պատասխանատութիւնից, թէ նա կմեր-  
ժի ռազմական վարկերը: Դրանում չէինք կասկա-  
ծում նոյնիսկ մէնք՝ ձախ - արձատականներս, որ  
ամենից աւելի էինք քննադատաբար վերաբերում  
կուսակցութեան: Բայց օգոստոսի 4-ին ֆրակցիալի  
նիստում պարզեց, որ նեխումը շատ աւելի է խո-  
րոցել քան կարելի էր սպասել ֆրակցիալի մեծ  
մասը կողմանից եղաւ ընդունելու վարկերը: Լիբ-

կնեխտը մի վայրկեան անգամ չէր կասկածում, որ  
այդ որոշումը կործանարար է: Բայց նա էլ չվստահա-  
ցաւ ձայն տալ ընդգէմ վարկերի: Մի բանի շաբաթ  
անց՝ թէ մասնաւոր խօսակցութեան ժամանակ և  
թէ հրապարակով՝ կուսակցութեան նառատհարտի  
կազմակերպութեան առջև յալտնեց, թէ ինքը մե-  
ղադրում է իրեն, որ չէ կատարել իր պարտքը: Իր  
այդ քայլը նա բացատրում էր նրանով, որ կարծում  
էր, թէ շուտով կուսակցութիւնը պայքարի կրոնւի  
կառավարութեան հետ և թէ այդ պայքարը շու-  
տով կոպանի կուսակցութեան բոլոր պատրանք-  
ները, նա կամենում էր կուսակցութեան միութիւնը  
պահպանել մինչև այն օրը, երբ ամբողջ կուսակցու-  
թիւնը վերստին կուի կսկսի կառավարութեան  
դէմ: Օգոստոսի 4-ին Լիբկնեխտը վերջին տուրքը  
տւեց իր անցեալին, հաւատալով, որ շարժումն ինքը  
կսրբագրի իր սխալները: Պատերազմն սկսւելուց  
մի քանի օր առաջ Լիբկնեխտը ներկայ էր ֆրան-  
սական սոցալ - գեմոկրատիալի համագումարին,  
դուրս եկաւ խօսելու ֆրանսական բանւորների  
միտինգներում, որոնց նա սիրում էր իր ամբողջ  
հրաշերմ սիրով: Այն միտքը, թէ գերման իմպերիա-  
լիզմի կրունկը կոխկրտում է ֆրանսական բանւո-  
րական շարժումը, մի բոպէ անգամ հանդիսաւ չէր  
թողնում նրան: Օգոստոսի 4-ից մի քանի օր անց՝  
շնչելով նացիոնալիզմի հեղձուցիչ գաղերը, որ բարձ-  
րանում էին գերման բանւորական մամուլի էջե-  
րից, նա հասկացաւ, որ օգոստոսի 4-ը գերմոն

սոցիալ - գենոկրատիալի կործանումն էր: Եւ առանց  
որ և է կասկած ունենալու այն ճանապարհի մասին,  
որ նա պարտաւոր է ընտրել նա նետւեց պալքարի  
մէջ: Արդէն սելտեմբերին Շտումհարտում և Պօտո-  
դամի մի շրջանում նա փորձեց զուրս զալ միտինգ-  
ներում, պահանջերով՝ վերջ տալ պատերազմին:

Ուստիկանութիւնն արգելում էր այդ միտինգ-  
ները:

Լիբէնեխան եռանգուն աշխատանք է սկսում  
կուսակցութեան ներսու: Նա զուրս է զալիս կու-  
սակցութեան հարիւրաւոր ժողովներում և ամե-  
նաեռանդուն ու անխնայ կերպով հրապարակ է  
հանում - մասսաների առջև գաւանանութեան այն  
մեծ անդունզբ, ուր ընկել է վերման սոցիալ - գե-  
նոկրատիան: Նո կոչ էր անում բանուորներին բա-  
ցարձակ կոիւ մղերու իրենց առաջնորդների դէմ: Կու-  
սակցութեան վարչութիւնը, վր զլուխն ունենալով  
Շալդեմանին և Երերախն, հայածանք է սկսում նրա  
դէմ, մեղադրելով նրան կործանարար ընթացքի,  
խուժանավարութեան և ամեն տեսակ այլ մեղերի  
համար: Լիբէնեխատի նամակադրութիւնը կուսակցա-  
կան վարչութեան հետ այդ առիթով ցոյց է տալիս,  
որ նա միանդամայն սպառնազիւած կուող է ար-  
դէն. այդ նամակադրութիւնը ցոյց է տալիս նաև,  
որ յանձինս իր հայառաջորդների նա տեսնում է  
թշնամիներ, որոնց պէտք է ո՛չ թէ վիճաբանու-  
թիւններով ուղղել, ուղիղ ճանապարհի բերել,  
այլ տապալել:

Մօտենում է ուղիսատաղի երկրորդ սեսիան,  
շուտափոյթ յաղթութեան յախերը սկսում են մա-  
րել: Մասնի վրայ գերմանական զօրքերը յետ են  
մղւում ֆրանսիացիներից: Հինգենքուրզն սախաւած  
է սկսել իր նահանջր: Բայց այնուամենայնիւ, գեռ  
մեծ է հայրենասիրական խանդավագառութիւնը, այն-  
քան մեծ, որ կուսակցութեան չափաւոր օպպոզի-  
ցիան (Լելեբուր, Հատզէ) տականին չէ համարձակ-  
ւում հետեւել լիբէնեխատին և հրապարակօրէն դուրս  
զալ պատերազմի գէմ: Լիբէնեխար զեռ անկարող է  
զանել որ և է մէկն, որ իր հետ միասին պարզէր մաս-  
սաների առջև բազոքի գրօշը: Մինչև իսկ մի քանի  
մերձաւոր բարեկամներ փորձում են յետ պահել  
նրան յախուռն քաղերից, յախնելով, որ եթէ նա  
մենակ դուրս դայ, այդ դէպքում նրա ընթացքը  
սոսկ անձնական բնաւորութիւն կըրի և կարող է  
այնպիսի տպաւորութիւն թողնել թէ նրան հե-  
տեղող չկար լիբէնեխար փորձում է գեռ համոզել մի  
քանի պատգամաւորների, որոնք մինչ այդ ժողով-  
ներում զուրս էին զալիս իրեւ ծալըաշեղ ձախեր:  
Բայց երբ այդ ժի յաջողուում, նա որոշում է մենակ  
դուրս դայ: Ես երբէք չեմ մոռանայ այդ օրը: Այն  
ժամանակ մենք ամենքս խեղդւում էինք աստորերէ-  
րեայց վիճակի մէջ: Ես միշտում հմ ինչպիսի պայ-  
մաններում ես սախաւած էի զրել պատերազմի  
պատճառների մասին աթրեմենի Քաղաքացիական  
թէրթում, որ այն ժամանակ պատիւ ունեցաւ ի-  
նել մէկը սակաւաթիւ այն օրդաններից, որ կու

Էին մղում գերման իմպերիալիզմի դէմ: Ես հարկադր-  
ւած էի գերման մեծ լայթանակները բացատրելու  
եղանակով քաղաքացիներ անել գերման զինւորական  
և քաղաքական գրականութիւնից, օրպէսզի ապա-  
ցուցեմ, թէ որքան լաւ էր պատրաստւած Գերմա-  
նիալի «պաշտպանութիւնը»: Դասախոսութիւնները  
պատերազմի հանդէպ ունեցած մեր վերաբերմունքի  
մասին մենք ստիպւած էինք կարգալ «Անդլիական  
իմպերիալիզմի պատմութիւնը» խորագրի տակ:  
Լիբէնեխորի համարձակօրէն հրապարակ գալը էլեք-  
տրականացրեց օպպոզիցիան: Դա սկիզբն էր բա-  
ցարձակ պալքարի: Պէտք է ճանաչել դաւաճանու-  
թեան այն ճնշող մթնոլորտը, որ շրջապատում էր  
նրան, օրպէսզի հասկանալի լինի նրա ընթացքի հե-  
րոսականութիւնը:

իր հանդէս գալու երեկոն, ընդամենք մի քանի  
յամ առաջ, նա փորձեց համոզել այժմեան «ան-  
կախ» խմբականներից մէկին, որ նա էլ դուրս գայ իր  
հետո Ալդ չաշողուեց նրան, որովհետեւ քաշարի «ան-  
կախ», թէև հասկանում էր, որ պէտք է դուրս  
գալ բայց հրաժարվեց, պատճառաբաներով իր մեր-  
ժումը նրանով, որ ամուսնացած էր և չէ կարող  
ոխոկ անել ընդհարւելու կազմակերպութեան հետ:

Ալդ օրը, երբ Լիբէնեխտը մտնում էր նիստի գահին, նրա սեղմաւած շրթունքները ցոյց էին տալիս, որ նա ընդմիշտ ընտրել է իր ուղին, որ ներքուստ վճռել է իր բաղզքը։ Լիբէնեխտի հրապարակ գալր գարի առեց ո՛չ միայն բացարձուկ պալ-

ըարբին «պաշտպանողականների» գէմ, ալ և բաժան - բաժան արաւ օպպոզիցիան խկ:

Նայդեմանականները հասկացան, որ Լիբէնեխտի  
հետ անհնարին է որ և է կոմպրոմիս. յանուն ֆրակ-  
ցիալի կարգապահութեան, նրանք սկսեցին մէկը-  
միւսի յետեից բանաձեեր հանել, որոնց մէջ զատա-  
պարաւմ էին նրա ընթացքը: «Ես կապւած եմ  
միշագգալին համերաշխութեան գերագոյն կարգա-  
պահութեամբ», — պատասխանում էր Լիբէնեխտը և  
շարունակում իր զործը: Խաղխստգում նրան խօսել  
չէին առիթա, այն ժամանակ նա զրգում էր բան-  
որներին կարճ հարցութերով, որոնք խփում էին  
զերման իմպերիալիզմի վիրաւոր տեղերին:

Այն յամանակ կանցլերի ճառի միջոցին արած  
իր կարճ բացականչութիւններով, որ խփում էին  
խարազանի հարւածի պէս, նա կատարում էր իր  
պատագամաւորական պարտականութիւնը: Չորս կարճ  
բառեր՝ «Թուք ցանկանում էիք այս պատերազմը»,  
որ նա շպրտեց կանցլեր Բեկաման - Հորբեգի երեսին,  
երբ սա արտասանում էր իր կեղծ - խաղաղասիրա-  
կան ճառերից մէկը, աւելի շատ բան արին, քան  
չաղեկի երկու տասնեւեկի լալիկան ճառերը, որոնք  
ոչ մի միաք մինչև վերջը չէին արտայալտում, որոնք  
ոչ մի մարտական նշանաբան համարձակութիւն  
չունեին հրապարակ նետելու:

Հասկանալի է, որ Շայդեմանին ուղեկից չէր  
մի մարդ, որ պրուսական լանգտագի տմբիոնից հռչ  
էր անում բոլոր երկրների բանու որներին զէնք վեր-

յնել իրենց կառավարութիւնների դէմ: Բայց և կուսակցութեան կենտրոնականներն ևս մինչև իրենց հոգու խորքը վրդովւած էին նրա ընթացքով: Այդ տատանուող մարդիկ, որ կուսակցական դադանի ժողովներում յարձակւում էին «պաշտպանողականների» վրայ, բայց որ՝ յանուն կուսակցական զիսցիպինի և համերաշխութեան սոցիալիզմի դաւաճանների՝ պարլամենտական ամրիոնից հրաժարւում էին անջատել շաբաթականներից, շաբաթականներից աւելի էին կատարում Լիբէնեխտի դէմ: Զիար մի ցեխ, մի մեղադրանք, որ չշպրտէին նրա վրայ այն պատճառով միայն, որ նա համարձակւել էր զօւրս զալ այդպէս: Լիբէնեխտն անողոք կռիւ սկսեց նրանց դէմ: Միացեալ Փրոնտի պահպանիչները լալիս էին, որ նա չարգում է այդ Փրոնտը, աղերսում էին, որ այդ բանը չանի: Բայց Լիբէնեխտը զիտէր, որ սոցիալիզմի համար կորած է նա, ով զիշումներ է անում պաշտպանողականներին: Եւ նա խնայել չգիտէր: Գերման կառավարութիւնը փորձեց վերջ տալ նրա այդ եռանդուն զործունէութեան և զօրակոչելով նրան, ուղարկեց արևելեան Փրոնտը: Բայց, չնայած խիստ հակողութեան, Լիբէնեխտն ուղամանակատում էլ շարունակեց իր աշխատանքը: Սերա կապ ունենալով Փրոնտի զինւորների և Գերմանիայում գտնուող ընկերների հետ, նա զեկավարում էր յետակայ կռիւր, հրատարակելով «Սպարտակի Նամակները»—այդ փոքրիկ, մերենատիալ թերթիկները հրատապ հարցերի մասին: Ամենից առաջ

նա իր սլաքներն ուղղում էր օպպոզիցիալի տատանող տարրերի դէմ: Կուսակցութեան նախագահ Հապէի շուրջը համախմբւած տարրերը Լիբէնեխտի խմբակից աւելի վասնգաւոր համարելով, պաշտպանողական մածուլը յանախ արտատպում էր ապր անլեզալ նամակները: Այդպիսով նամակներն աւելի լայն շրջանների վրայ էին ազդում, քան այդ կարելի էր անել անլեզալ թերթիկների միջոցով: Երբ 1915 թ. աշնանն առաջին անգամ հաւաքւում է Ցիմմեր վալդի միջազգային կոնֆերանսը, Լիբէնեխտը, անկարող լինելով անցնել ստհմանը, նամակ է ուղարկում կոնֆերանսին: Այդ նամակի մէջ նա խարազանում է կենարունական տարրերը և կոչ անում կոնֆերանսին՝ անխնալորէն մարակելով առաջ մզել նրանց: Երբ կոնֆերանսի ձախ մասը, իր գլուխն ունենալով ուսւս կոմմունիստներին, գեմոնստրատիվ կերպով ողջունեց Լիբէնեխտի նամակը, Լեգերութիւնը յախնեց, թէ Լիբէնեխտը Փրակցիա չունի: Այն ժամանակ նա ստացաւ Տրոցկու պատասխանը, թէ միջազգային սոցիալիզմը, բացի Լիբէնեխտից դերմտն սոցիալիզմի ուրիշ ներկայացուցիչ չէ հանաչում:

Մօտենում է մայիսի 1-ի օրը: «Սպարտակ» խմբակը հրապարակային ցոլց է սարքում: Ըսկերները համոզում են Լիբէնեխտին, որ այն ժամանակ Փրոնտից Բերլին էր եկել ցոլցին չմասնակցել, որովհետեւ նրան ոստիկանութեան ձեռքն ընկնելը ո՛չ միայն նրան երկար արթիների առժանակիր աշխա-

տանքով է սպառնում, ալլ և շատ կթուլացնի կազմակերպութիւնը: Լիբէնեխար մերժում է ընկերների նախազգուշացումը, որովհետեւ նա կարծում է, թէ սոցիալիզմի այդօրինակ անկումից լետոյ չի կարելի բանւորներին ցուցերի հրաւիրել և անձամբ չմասնակցել այդ ցուցերին: Նա կարծում է, որ անձնական նախաձեռնութեամբ, առաջնորդի նախաձեռնութեամբ պէտք է վերստին շահել բանւոր զանգւածների փատահութիւնը նրանցից զոհեր պահանջելու իրաւունք ունենալու համար:

«Երիտասարդութեան ինտերնացիոնալ»-ում, երիտասարդութեան միջազգային միութեան օրդանի մէջ «Անսասան» կեղծանունով նա պաշտպանում է անհատի նշանակութիւնը լեզափոխական շարժման մէջ, պաշտպանում է քաջութեան, նախաձեռնութեան նշանակութիւնը: Եւ իր համոզմունքներին հաւատարիմ նա գնում է ցուցին մասնակցելու:

Բերլինի ոստիկանութիւնը դուրս քաշեց Լիբէնեխարին ցուցաբար բանւորների մի խմբից և լազմականօրէն նրան բանտ տարաւ: Մայիսի 2-ին և 8-ին արած իր երկու յալտարարութիւններով լիբէնեխարն իր քննիչներին բացատրում է այն պատճառները, որ գրգեցին նրան ցուցը կազմակերպել և անձամբ մասնակցել: «Այս պատերազմը ո՛չ թէ պատերազմ է յանուն ազգային տնկախութեան, իսմ ճնշած ժողովուրդների ազատագրութեան, կամ վերջապէս, յանուն ժողովրդական զանգւածների

բարօրութեան: Պրոլետարիատի տեսակէաից այս պատերազմը ուրիշ բան չէ, եթէ ոչ բանւոր դասի քաղաքական ճնշման, անտեսական շահագործման, զինւորական ոչնչացման գերագոյն աստիճանը կապիտալիստական նպատակների համար»: Եւ նա յախանում է, թէ իր պարագն է համարում, որպէս սոցիալիստ, բոլոր տրամադրելի միջոցներով կուր մղել պատերազմի դէմ: «Այս քաղաքականութիւնը միայն իմ քաղաքականութիւնը չէ, մի քաղաքականութիւն, որին ես պիտի հետեւեմ, որքան էլ թանկ նստի գա ինձ,—ալլ գա զերման ազգաբնակութեան ինչպէս և միւս պատերազմիկ ու չէզոք պետութիւնների ազգաբնակութեան մի յարածուն մասի քաղաքականութիւնն է: Այդ քաղաքականութիւնը շուտով կիմնի (ինչի վրայ որ ես լոյս ունեմ և ինչի համար որ ես կուգեմ անդադրում աշխատել) բոլոր երկրների բանւոր դասակարգի քաղաքականութիւնը, որոնք ոլժ կունենան այսօր իշխող դասակարգերի իմպերիալիստական կամքը կոտրելու և յանուն մարդկութեան բարօրութեան իրենց հայեցականութեամբ ժողովուրդների փոխ-յարաբերութիւններն որոշելու»: Մայիսի 8-ին արած իր միւս յալտարարութեան մէջ, պատասխանելով իրեն ուղղած մեղադրանքին, իբր թէ թշնամուն օդնութիւն ցուց տւած լինելու առթիւ արւած յանդիմանութեան, նա տասց: «Միջազգային սոցիալիստական թշնամի է թէ՛ օտար և թէ տեղական երկրի կապիտալիստական կառավարու-

թիւններին; Նա կուռում է յանուն միջազգալին պրո-  
լետարիատի ընդդէմ միջազգալին կապիտալի, բայց  
նա կապիտալի վրայ յարձակւում է այնտեղ, ուր հան-  
ափում է այն և ուր կարող է յարձակւել նրա վրայ,  
զործին օգուտ բերերով։ Այդ նշանակում է, որ  
առաջին հերթին նա պիտի յարձակում գործի սեպ-  
հական երկրի կապիտալի վրայ։ Իր սեփական եր-  
կրում նա պէտք է կօխի մղի յանուն միջազգալին  
պրոլետարիատի՝ սեփական կառավարութեան դէմ,  
որ ներկայացուցիչն է միջազգալին կապիտալի։

Դատից առաջ, որ տեղի ունեցաւ գանգակ  
գաղինում, որ շրջապատւած էր գորքերով, Կարլ  
Լիբկնեխար, մարտակոչ անելով իմադերիալիստական  
Գերմանիայի ներկայացուցիչներին, կատարեալ վստա-  
հութեամբ յարարարեց, թէ նա ո՛չ մի վայրկեան  
չի կատածում, թէ մօտ է այն օրը, երբ նրանք՝ իր  
գատաւորները՝ նստած կլինին մեղազրեալների  
նստարանի վրայ և կրնեն ժողովրդի դատավատիմք,  
և ժողովրդի, որի ոչժը կսպանի նրանց։

Լիբկնեխարի գատապատիմն ամբողջ Գերմա-  
նիակում ազգանշան եղաւ ցոյցերի ու զործադուլ-  
ների։ Լիբկնեխար Գերմանիայում դարձաւ բանտա-  
րական լեզափոխութեան դրօշը։ Կառավարութիւնն  
այնքան էր վախենում նրա ազգեցութիւնից, որ  
հրաժարեց նոյնիսկ զեղծել նրա գատապատիմք։ Դա-  
տավիճար, որի մէջ գատաւորներն ստիպւած էին  
ընդունել որ Լիբկնեխար ունեցել է ազնիւ բազա-  
րական շարժառիթմներ, մատուցին յանձնելու համար

փոխարինուեց այլ կերպ ձևակերպւած գատա-  
վճռով, որի մէջ արգեն նրա ընթացքը բացատրւում  
է «Փանատիկոսութեամբ»։

Կարլ Լիբկնեխարի յետեւից փակւեցին տաժա-  
նակիր բանտի գոները։ Պարլամենտը, լաքերութիւն  
անելով կառավարութեան առջև, յանձնեց նրան  
կառավարութեան ձեռքը, հանելով նրա անունն իր  
շարքերից։ Բանտում այլևս պատղամաւոր Լիբկնեխար  
չկար, այլ մի հասարակ գինւոր, որ իբրև «հալրե-  
նիքի գաւառնան» դատապարտւած էր 6 ամեալ  
տաժանակիր տշխատանքի և 10 տարով դրկւած էր  
բազարացիական իրաւունքներից։ Կարլ Լիբկնեխար  
կօշխակարութիւն է սովորում բանտում։ Բանտի  
բոլոր գրկանքներին նա դիմանում է հեղնօրէն,  
փնտրելով իր հոգու հանդիսար յոյն գտականներ՝  
Եւրիպիդի ու Էսքիլսի, իր ամենասիրելի զրոյնե-  
րի երկերի մէջ։ Նա ողահօրէն որսում էր գրսից  
դժւարութեամբ եկող ամեն մի լուր մինչեւ իր հո-  
գու խորքը հաւատացած լինելով, որ մօտ է օրը,  
երբ յեղափոխութիւնը կապսաի իրէն։ Պատերազմի  
փոթորկի, «ատորերկեալ» աշխատանքի մէջ Լիբ-  
կնեխար գտաւ այն, ինչ որ նրան չէր տւել թէո-  
րիան, ինչ որ նրան չէր տւել նրա նախկին պրակ-  
տիկան—մի ուղիղ ճանապարհ, որի վրայ  
չէս նայում ո՛չ գէպի աչ, ո՛չ գէպի ձախ։  
Այժմ, պատերազմի սկզբից, որ երկան հանեց զա-  
նազան գատակարգերի ու խմբեցութիւնների փաս-  
տական լարարերութիւնները, Լիբկնեխարը պարդ

ու սրոշակի տեսաւ, թէ ունմ վրայ պէտք է լոյս  
զնել, տեսաւ, որ միտի ուղին բանւորական զանգ-  
ւածների յեղափոխական պալքարն է: Նա թօվա-  
փեց ալսպէս կոչւած (ընդարձակ) սոցիալիզմի վեր-  
ջին ֆացորդներն և գարձաւ յեղափոխական բան-  
ւոր գասակարգի իսկական առաջնորդը: Մենք տե-  
ղեկութիւն ստացանք, որ բանւում նա շատ էր  
անհանգստանում այն հետեանքների պատճառով,  
որ կարող էր ունենալ Բրեստի հաշտութիւնը ուու  
րանւորական կառավարութեան համար: Մենք հա-  
մուլած ենք, որ այժմ, նա, ինչպէս նաև Լենինի  
արտաքին քաղաքականութեան բոլոր ուուս հակա-  
ռակորդները, համոզւել է, որ Լենինն արդարացի  
էր: Բրեստի հաշտութիւնից յետոյ Լիբկնեխտին  
բանտից շուտով արձակելլր ցոյց է տալիս, թէ որ-  
քան անհիմն էր այն երկիւղը, որ Բրեստի հաշտու-  
թիւնը կզօրացնի գերման իմպերիալիզմը:


Յանձնիս Լիբկնեխտի ուուս բանւորներն ող-  
ջունում են մի մարդու, որը իմպերիալիստական  
ուկացիայի մութ գիշերին տեսնում էր իր զլիի  
վերեւում միջազգալին սոցիալիզմի պայծառօքէն  
փալող աստղը, որը բանւորական յեղափոխութեան  
նկատմամբ եղած թերտհաւտութեան շրջանում,  
խորապէս ու հաստատ համոզւած էր նրա անխու-  
սափելիութեան, որը, հաւատալով ալդ յեղափոխու-  
թեան, ձեռքերը ծոցը չէր դնում, որը զիտէր, թէ  
պալքարի համար հարկաւոր է զէնք կուեր: Յանձնիս  
Լիբկնեխտի նրանք ողջունում են մի մարդու, որն

անգամ պարտւած, անգամ բանակի մէջ, թշնամու-  
ձեռքին գերի, չէր խոնարհում իր հպարա զրուխսի,  
այլ բացարձակ յալտնում էր թշնամուն, որ եթէ նու-  
արդարանայ կամ ազատի բանտից, կրկին ձեռնա-  
մուխ կլինի միենոյն աշխատանքին, որից կարել է  
իրեն իմպերիալիստական տրդարագատութեան  
ձեռքը: Լիբկնեխտը թանկ է ուուս բանւոր զասա-  
կարգի համար, իբրև մի մարդ, որ միշտ իր ամբողջ  
ուժերով օժանդակել է ուուս բանւորական շարժ-  
ման և որ այժմ, նայելով ուուս յեղափոխութեան  
բաղթանակին, կարող է ասել իր մասին. «Ես էլ եմ  
նրա համար աշխատել»: Բայց նա թանկ է մեզ հա-  
մար և այն պատճառով, որ ուուս յեղափոխութիւնը  
նրան նայելով, կարող է ասել ինքն իրեն, որ նրա  
գատի, նրա աշխատանքի մէջ կենդանի էր իր ողին,  
որ նա ընդունեց չերմ սրտով:

Լիբկնեխտի հայրը, ձերունի Վիլհելմ Լիբկնեխտը,  
իրեն համեստաբար անւանում էր յեղափոխութեան  
զինուոր. յանձնիս Կարլի՝ մենք սոցունում ենք յե-  
ղափոխութեան առաջնորդին, որ գերման պրոե-  
տարիատին պիտի ցոյց տայ պալքարի շիտակ ու-  
ղին, որ Գերմանիալի բանւորական յեղափոխութեան  
գրոշակիրն է լինելու, որովհետև ընութիւնն օժտել  
է նրան այն ամեն յատկութիւններով, որ պէտք է  
առաջնորդ լինելու համար: Նա պարզել է նրան  
սրատես միտք, տաք սիրտ, խանդակառութիւն,  
առանց որի մեծ գործեր անկարելի է կատարել: Ով  
հանգիպել է Լիբկնեխտին պատերագմից առաջ և

պատերազմի ժամանակ, նու տեսել է և կարող էր  
շօշափելու չափ զգալ, թէ ինչպէս նրա վրայ ըն-  
կած անասելի պատասխանատութիւնը կենսու-  
րախ, ապրել սիրող, ուստի և շատերին շատ բան  
ներելու ընդունակ մարդուն գարձրել է Ժամանա-  
կի պահանջին համեմատ երկաթէ և խստասիրա-  
մարդ։ Ով նրան հանգիսկել է պատերազմից առաջ  
և պատերազմի ժամանակ, նու զգոցել է, թէ ինչ-  
պէս հետզհետէ աճում էր մետաղը նրա բնաւորու-  
թեան մէջ։ Ողջունելով նրա աղատութիւնը, մենք  
հաստատասկէս վատահ ենք, որ նու կիմնի գերման  
բանւոր գաւակարդի ո՛չ միայն գրօշակը, այլ և  
մուրճը։





# ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

## ԼՂՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Թ. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը.
2. Ն. Լենին. «Նամակ Ամերիկեան Բանտոքներին»։ գիւղ, 1 թ.
3. Վ. Ֆլիջէ. «Պրոլետարական պոէզիան» գիւղ՝ 2 թ.
4. Ներշնչակ. «Դպրութիւն» (Հայ Ֆեդ. Դաշնակցութիւնը և Բագրի Խորհրդալին հշանառութիւնը) գիւղ՝ 75 կ.
5. Զիջերին. «ԲԻՌԵՍԻՑԻՑ ՅԵՑՈՅ» (Ձեկուցում Խորհրդական 5-րդ Համագումարին) գիւղ՝ 1 թ.
6. Ն. Լենին. «Կարլ Մարքս» (Համառօտ կենսագրութիւնը և մարքսիզմի շարադրութիւնը) գիւղ՝ 1 թ. 50 կ.
7. Ներշնչակ. «Հուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան».
8. Կ. Արմ. Իիկ'ինչկ. I. «Կոմմունիստական Կուսակցութիւնը Գերմանիայում», II. «Կարլ Լիբկնեխով» (Լիբկնեխունկարով).

## ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՂՅՍ ԿՏԵՍՆԵՆ.

1. Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. Էնգելս—«Կոմմունիստական Մանիֆեստը»—Պետիանովի, Կառցկու և հեղինակների յառաջաբաններով.
2. Ն. ԲՈՒԽԱՐԻՆ. «Կոմմունիստների ծրագիրը».
3. Մ. ՊԱՎԼՈՎԻՉ (Վելտման) «Ասիան և իր դերը համաշխարհային պատերազմի մեջ».

## ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԵՒ ՇՈՒՏՈՎ ՄԱՍՈՒԼԻՆ ԿՅԱՆՉՆԵՆ.

1. Ն. Լենին. «Իմպերիալիզմը, որպէս կապիտալիզմի վերջին էտապ».
2. Ն. Լենին. «Պետութիւն և յեղափոխութիւն».
3. Կ. ՄԱՐՔՍ. «Պատմական երկեր».
4. Կ. ԿԱՌԻՑԿԻ. «Քրիստոնէութեան Ծագումը».
5. Կ. ԿԱՌԻՑԿԻ. Է. ԲԵՐՆԵՑՑԱՅՆ և այլն. «Սոցիալիզմի կարսպետները» (Սոցիալիզմի պատմութիւնը). 2 հատոր.
6. Ա. ԲՈԳԻԱԿՆԻԿ Սի ՍՏԵՊԱՆՈՎ. «Դասընթացք քաղաքատնտեսութեան».
7. Ա. ԲՈՂԴԱՆՈՎ. «Համառօտ քաղաքատնտեսութիւն».
8. Կ. ԿԱՌԻՑԿԻ. «Կ. Մարքսի տնտեսագիտական ուսուցումը».
9. Կ. ԿԱՌԻՑԿԻ. «Դասակարգային շաների հակամարտութիւնը 1789 մին».